**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**հրավերի պարզաբանման մասին**

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
**2026 թվականի փետրվարի 09-ի թիվ 1.1 որոշմամբ** և հրապարակվում է
“Գնումների մասին” ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն
Ընթացակարգի ծածկագիրը **«ՀՀ ԱԱԾ-ՏԱՆԿԿԳՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/1-ՀՊՍ1»**

ՀՀ ազգային անվտանգության ծառայության կարիքների համար համակարգչային, պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ու պարագաների ձեռքբերման նպատակով կազմակերպված **«ՀՀ ԱԱԾ-ՏԱՆԿԿԳՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/1-ՀՊՍ1»** ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ **2026 թվականի փետրվարի 06-ին և փետրվարի 07-ին** ստացված հարցումները և դրանց վերաբերյալ **2026 թվականի փետրվարի 09-ին** տրամադրված պարզաբանումը՝

Հարցում 1

«Հարգելի պատվիրատու, խնդրում եմ անկեղծ ասեք ինչ նպատակով եք հայտարարել նման գնում? Աշխարհում ձեր կողմից նշված ապրանքների գները գրեթե կրկնակի անգամ գերազանցում են ձեր կողմից նշված նախահաշվային արժեքները, չեմ կարծում որ դուք դրա մասին տեղյակ չեք: Եթե իսկապես ուզում եք հրավերով պահանջվող ապրանքները ձեռք բերել ապա պետք է փոխեք նախահաշվային արժեքներ, եթե իհարկե չունեք պայմանավորվածություններ…»

Հարցում 2

«Հարգելի գործընկեր, խնդրում եմ հստակեցնել 1) 41-րդ չափաբաժնով ներկայացված ապրանքի քանակը, քանի որ նշել եք լրակազմ, իսկ այս մոդելի քարթիջներից լինում է 4 գույն, կարելի է ենթադրել որ յուրաքանչյուր գույնից անհրաժեշտ է 3 հատ, և ընդունելի է արդյոք յուրաքանչյուր գույնի քարթիրջի մատակարարումը առանձին տուփերով՞ քանի որ դրանք չեն արտադրվում որպես մեկ ամբողջական քարթրիջներ:»

Պարզաբանում 1

«Հարգելի գործընկեր տվյալ մրցույթի նախահաշվային գները ձևավորվել են նախորդ կայացած մրցույթների շահած գների կամ ընթացքում կատարված գնահարցումների հիման վրա:»

Պարզաբանում 2

«Հարգելի գործընկեր մեզ անհրաժեշտ են 3 լրակազմ քարթրիջներ, որոնցից յուրաքանչյուր լրակազմն իր մեջ ներառում է 4 տարբեր գույների (B/C/M/Y) քարթրիջներ, ինչպես նշված է մեր կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում: Յուրաքանչյուր գույնի քարթիրջի մատակարարումն առանձին տուփերով ընդունելի է:»

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել **«ՀՀ ԱԱԾ-ՏԱՆԿԿԳՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/1-ՀՊՍ1»** ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Վ. Էլոյանին:

Հեռախոս՝ +374 98 389 689 (ներքին հեռախոսահամար՝ 08):

Էլեկտրանային փոստ՝ v.eloyan@promotion.am:

**«ՀՀ ԱԱԾ-ՏԱՆԿԿԳՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/1-ՀՊՍ1»** ծածկագրով
գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով

ՀՀ ԱԱԾ ՏԱ և